ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
««ԼԵՌՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-328²-01.07.2022-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն. «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը»: Սույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասին:	Առաջարկն ընդունվել է:Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը լրացնել նոր մասով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով» բառերով:	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածում «10-րդ օրը» բառերը փոխարինել «տասներորդ օրը» բառերով:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է